ՀՌԿԿ-Հայաստան ֆոկուս խումբ ՔՀԿ-ների հետ *մարտ 2019 թ.*

Տեղեկատվական և գրավոր համաձայնության թերթիկ

Նշում. *Ֆոկուս խմբային քննարկման մասնակիցների համար նախատեսված այս թերթիկը լրացվում է նախապես՝ մինչև քննարկումը սկսելը:*

- ՀՌԿԿ-Հայաստանը՝ Եվրասիա համագործակցություն հիմնադրամի, Մեդիա նախաձեռնությունների կենտրոնի, Գորիսի մամուլի ակումբի, Մարտունու կանանց համայնքային խորհրդի և Քմյունիթի սենթր ֆոր դիվելոփմենթ ՀԿ-ի հետ ձևավորված կոնսորցիումի շրջանակներում, ԱՄՆ ՄԶԳ աջակցությամբ իրագործում է «ՀԿ Դեպո – Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագիրը»:

- Ծրագիրը խթանում է քաղաքացիական հասարակության կայուն զարգացումը և բարձրացնում քաղաքացիական հասարակության կազմակերպությունների՝ որպես բարեփոխումներն առաջ մղող և վերահսկող դերակատարների կարողությունները, բարելավում է ծառայությունները և նպաստում առավել արդյունավետ կառավարմանը տնտեսական, ժողովրդավարական և սոցիալական ոլորտներում:

- Շնորհակալ ենք այս քննարկմանը մասնակցելու նախնական համաձայնության համար: Ձեր կարծիքը շատ արժեքավոր է: Ձեր տրամադրած տեղեկատվությունն անանուն է և Ձեր տեսակետները չեն կապվելու Ձեր անվան հետ:

- Մենք ցանկանում ենք ձայնագրել ֆոկուս խմբային քննարկումը՝ վստահ լինելու համար, որ բաց չենք թողնի խմբում բարձրաձայնված մտքերը, կարծիքները և գաղափարները: Ձայնագրությունը չի կապվի մասնակիցների անունների հետ, և ձայնագրությունների հասանելիությունը խստորեն կվերահսկվի:

- Դուք կարող եք հրաժարվել պատասխանել ցանկացած հարցի և, եթե ցանկանաք, կարող եք կասեցնել Ձեր մասնակցությունը քննարկմանը:

- Մենք հասկանում ենք, թե որքան կարևոր է, որ Ձեր տրամադրած տեղեկատվությունը գաղտնի և անանուն մնա: Մենք խնդրում ենք, որ քննարկման մասնակիցները հարգեն մեկը մյուսի պատասխանը գաղտնի պահելու սկզբունքը:

- Եթե հարցեր ունեք հիմա, կամ հարցեր կունենաք ֆոկուս խմբային քննարկման ավարտից հետո, դուք միշտ կարող եք դիմել հետազոտության թիմի ներկայացուցչին, ում կոնտակտային տվյալներն այս տեղեկատվական թերթիկի վրա են:

- Խնդրում ենք նշում անել և ստորագրել՝ համաձայնելով մասնակցել այս ֆոկուս խմբային քննարկմանը և ապահովել մեր հետադարձ կապը Ձեր հետ:

  Համաձայն եմ մասնակցել ☐

  Մեր կոնտակտային տվյալները՝
  Սոնա Բալասանյան, ՀՌԿԿ-Հայաստան հիմնադրամ, հետազոտության գծով տնօրեն, էլ. փոստ՝ rd@crrc.am, հեռախոս՝ 010 57 48 98 (+102):

Մոդերատորի ուղեցույց. ֆոկուս-խմբային քննարկում ՔՀԿ-ների հետ

ԱՄՆ ՄԶԳ ՔՀԿ զարգացման ծրագիր (ՀԿ ԴեՊո)

Այս ֆոկուս-խմբային քննարկումը (ՖԽ) պետք է անցկացվի քաղաքացիական հասարակության կազմակերպությունների (ՔՀԿ) ներկայացուցիչների հետ: Ֆոկուս խմբային քննարկման ընթացքում մեկ կազմակերպությունից կարող է մասնակցել միայն մեկ ներկայացուցիչ: ՖԽ մասնակիցների կողմից նախապես պետք է լրացվեն տեղեկատվական թերթիկները:

Ներածություն

- Ողջունեք մասնակիցներին և ներկայացրեք հետազոտության նպատակները:
- Խրախուսեք ակտիվ մասնակցությունը քննարկմանը: Նշեք, որ չկան ճիշտ ու սխալ պատասխաններ, և բոլոր դիտարկումները ողջունելի են: Քննարկման ընթացքում խնդրեք մասնակիցներին օրինակներ բերել:
- Նշեք, որ ծրագրի շրջանակներում կպահպանվի քննարկման գաղտնիությունը: Անուններ չեն օգտագործվելու, իսկ անձնական տվյալները չեն տրամադրվելու այլ անձանց: Ձայնագրությունը կօգտագործվի միայն հնչեցված գաղափարները և կարծիքները ճիշտ վերարտադրելու և վերլուծական հաշվետվություն պատրաստելու համար:
- Ներկայացրեք մոդերատորին (անունը, դերը քննարկման ընթացքում) և անձնակազմի այլ անդամներին (օգնական, դիտորդ):
- Խնդրեք մասնակիցներին ներկայանալ (անուն, համայնք/մարզ, ՔՀԿ, դերը ՔՀԿ-ում):
- Նշեք մասնակիցների սեռը և տարիքը (մոտավոր):

Հարցեր/քննարկում

1. Ի՞նչ ծառայություններ են մատուցում ձեր կազմակերպությունները: **Մասնավորեցում**: Ինչպե՞ս եք բացահայտում Ձեր համայնքի կարիքները: Ի՞նչ քայլեր եք անում Ձեր ծրագրերի և կարիքի միջև ընկած բացը լրացնելու համար:
2. Որո՞նք են Ձեր ՔՀԿ-ների առաջ ծառացած ամենամեծ մարտահրավերները: Եկեք հերթով քննարկենք հետևյալ մարտահրավերներից յուրաքանչյուրը:
   - **Կազմակերպական կարողություններ [Մասնավորեցում:** Քննարկեք զարգացման կարիք ունեցող ոլորտները ղեկավարում, կառավարում, հանրային կապեր, ֆինանսական կայունություն, կանոնակարգեր և այլն];
   - **Այլ ՔՀԿ-ների հետ համագործակցություն;**
   - **ՔՀԿ-ների հանդեպ հանրային վերաբերմունք**:

   Ուղղորդում. Ի՞նչ ջանքեր պետք է գործադրի Ձեր ՔՀԿ-ն՝ իր կարողությունները զարգացնելու համար: Ի՞նչ կարող են անել միջազգային կազմակերպությունները, պետական մարմինները, բիզնես ներկայացուցիչները և մյուսները: Քննարկեք զարգացման միջոցառումների տեսակները, օրինակ դասընթաց, փորձի փոխանակում, խորհրդատվություն և այլն:
3. Հատկապես վերջին քաղաքական փոփոխություններից հետո, ի՞նչպես եք տեսնում Ձեր ՔՀԿ դերը Հայաստանում ժողովրդավարության զարգացման և հանրօգուտ աշխատանք իրականացնելու հարցում:

   Ուղղորդում. Փոխե՞լ եք արդյոք Ձեր ռազմավարությունը, քաղաքականությունները, ի՞նչ գործնական քայլեր եք իրականացնում:
4. (1) Ո՞վ կամ ինչպիսի՞ն պետք է լինի Ձեր կազմակերպության իդեալական դոնորը / ֆինանսավորողը (մեզ կոնկրետ անուններ չեն հետաքրքրում) (2) Որո՞նք կլինեին Ձեր

կազմակերպության կողմից մատուցվող իդեալական ծառայությունները: (3) Ինչպիսի՞ն կլիներ Ձեր կազմակերպության իդեալական անձնակազմը/աշխատակազմը: : [**Մոդերատոր.** մասնակիցներին բաժանեք մեկական թղթիկ և խնդրեք այս հարցերի հավաքական պատասխանն արտահայտել երեք հակիրճ բառ/բառակապակցությամբ, խնդրեք ամեն մասնակցի քննարկել իր գրածը և մի ստիպեք քննարկել, եթե մասնակիցը չի ցանկանում կիսվել խմբի հետ իր մտքերով՝ ուղղակի վերցրեք թղթիկը]:

5. Անդրադառնալով Ձեր՝ ՔՀԿ-պետություն համագործակցության հնարավորություններին՝ ինչպե՞ս է հնարավոր այս համագործակցությունը:
   Ուղղորդում. Համագործակցության ի՞նչ փորձ ունեք: Թավշյա հեղափոխությունից հետո պետական մարմինների հետ համագործակցելն ավելի դյուրի՞ն է դարձել, թե ավելի է դժվարացել: Համագործակցության ի՞նչ հիմնական եզրեր եք տեսնում պետական մարմինների հետ, ինչո՞ւ: Հնարավոր համարու՞մ եք, որ Ձեր ՔՀԿ-ն պետության համար որևէ վճարովի ծառայություն մատուցի: Իսկ պատրաստ է Ձեր ՔՀԿ-ն այդպիսի ծառայություն մատուցել անվճար հիմունքներով:

6. Թավշյա հեղափոխությունից հետո, որոշ մարդիկ կարծիք են հայտնում, թե ՔՀԿ ոլորտի բազմաթիվ ներկայացուցիչներ մտել են կառավարություն, և ՔՀԿ դաշտը դատարկվել է: Որքանո՞վ եք ճիշտ համարում այս գնահատականները:

7. Անդրադառնալով Ձեր՝ ՔՀԿ-բիզնես համագործակցության հնարավորություններին՝ ինչպե՞ս է հնարավոր այս համագործակցությունը:
   Ուղղորդում: Համագործակցության ի՞նչ փորձ ունեք: Համագործակցության ի՞նչ հիմնական եզրեր եք տեսնում, ինչո՞ւ:

8. Վերջին տարիներին իրականացվել են ՔՀԿ կարողությունների զարգացման մի քանի ծրագրեր: Ո՞ր ծրագրերը կարող եք մտաբերել:
   Ուղղորդում: Կոնկրետ Ձեր ՔՀԿ-ն այդ ծրագրերի հետ ի՞նչ առնչություն է ունեցել: Նկարագրեք Ձեր փորձը:

9. Մի փոքր ավելի մանրամասն խոսենք ՀԿ ԴեՊո ծրագրի մասին:
   Ուղղորդում. Լսե՞լ եք ծրագրի մասին: Որտեղի՞ց եք լսել ծրագրի մասին, ծրագրի շրջանակներում համագործակցության ի՞նչ փորձ ունեք: Օգտվե՞լ եք ՀԿ ԴեՊո պորտալից, հատկապես ի՞նչն եք առավել օգտակար համարում:

10. Ըստ ձեզ, մարդիկ վստահու՞մ են Ձեր ՔՀԿ-ին: Ինչպե՞ս կարելի է բարձրացնել ՔՀԿ նկատմամբ հանրային վստահության մակարդակը: Ի՞նչ կարող է այդ ուղղությամբ անել Ձեր ՔՀԿ-ն, ի՞նչ կարող են անել մյուս դերակատարները:

11. Արդյոք ի՞նչ կառաջարկեք ՔՀԿ-ներին և մյուս դերակատարներին՝ ՔՀԿ հատվածը բարելավելու համար:

<u>Ավարտ</u>

- Շնորհակալություն հայտնեք մասնակցության համար:
- Հարցրեք՝ կա՞ն արդյոք հարցեր, առաջարկներ կամ նկատառումներ:

Ֆոկուս խմբի համար անհրաժեշտ նյութերը, պարագաները

- Համաձայնության թերթիկ մասնակիցներից յուրաքանչյուրի համար
- Նոթատետրեր և գրիչ/մատիտ մասնակիցներից յուրաքանչյուրի համար
- Խրախուսական նվեր մասնակիցներից յուրաքանչյուրի համար
- Թղթիկներ գրառումների համար
- Ֆոկուս խմբային քննարկման ուղեցույցը մոդերատորի համար
- Երկու ձայնագրիչ
- Ձայնագրիչների մարտկոցներ
- Նոթբուք, նոթատետր և գրիչ/մատիտ օգնականի համար
- Մասնակիցների հյուրասիրություն

«ՀԿ Դեպո – Հասարակական կազմակերպությունների զարգացման ծրագիրը» ստեղծվել է Ամերիկայի ժողովրդի աջակցությամբ՝ ԱՄՆ Միջազգային զարգացման գործակալության միջոցով: Այս հետազոտության շրջանակներում ստեղծված նյութերի բովանդակության կամ արտահայտված տեսակետների հիման վրա արված եզրահանգումները միմիայն ՀՌԿԿ-Հայաստանինն են և պարտադիր չէ, որ արտահայտեն ԱՄՆ ՄԶԳ կամ ԱՄՆ կառավարության տեսակետները: